

ԿՈՆԴԱԿ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԷՆ

ԳԵՐՇ. Տ. ՀԱՅՐԻԿ ԵՊՍ. ԱՍԼԱՆԵԱՆԻ ԱՐԲՈՒԹԵԱՆ ՏԵԻՉՈՒԹԵԱՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԵՐԱՇԵՆՈՐՀ Տ. ՀԱՅՐԻԿ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՍԼԱՆԵԱՆ, ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏԷՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՈՒՑ, ՀԱՐԱՋԱՏԻ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՑ, ՈՂՋՈՑՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ, Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՑ ԸՅՈՐՆ ՄԵՐՈՑ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՆՈՐԶԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐՈՆ

Աստուծոյ օրհնութեան ներքեւ կը գտնուին մեր Սուրբ Եկեղեցին, մեր նուիրապետական Աթոռները եւ համայն հայ հաւատացեալ ժողովուրդը:

Աստուծոյ օրհնութեան ներքեւ են նաեւ Երուսաղէմի Հայոց Առաքելական Սուրբ Աթոռը եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը:

Ինչքան ուրախ եղանք, որ անցեալ հոկտեմբերին կարողացանք ուխտի գալ Սուրբ Քաղաք Երուսաղէմ, համբուրելու մեր Տիրոջ եւ Փրկչի Սուրբ Դերեզմանը եւ Դիւսաղիք Սուրբ Յակոբի եւ Սուրբ Իեթղեհէմի նուիրական սեղանները:

Ինչքան ուրախ ու երջանիկ եղանք նաեւ ողջագորուելով Ամենապատիւ պատրիարք Տ. Լեղիշէ արքեպիսկոպոսի եւ ամբողջ միաբանութեան հետ, ողջագորում, որ Մեր հոգին լեցուց սուրբ եւ մխիթարիչ զգացումներով, վասնզի տեսանք Մենք թէ բոլորդ լծուած էք Սուրբ Աթոռիդ հոգեւոր եւ նիւթական շինութեան մեծ աշխատանքին, Ձեր սրբազան պատրիարքի իմաստուն եւ կորովի ղեկավարութեան ներքեւ:

Մենք տեսանք նաեւ Ձեր գործունէութիւնը եւ Ձեր ստանձնած աշխատանքի բաժինը՝ իբրեւ լուսարարապետ Սուրբ Աթոռիդ:

Կնահատելով Ձեր այս բարձր պաշտօնը, Ձեր վաստակը եւ անցեալ բազում տարիներու Ձեր նուիրեալ ծառայութիւնը Հայ Եկեղեցիին, հայ Երուսաղէմին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, հոկտեմբերի 19ին Ձեզ շնորհեցինք արքութեան պատիւ, նաեւ իբրեւ Մեր եղբայրական սիրոյ արտայայտութիւն Ձեր անձին հանդէպ:

Սոյն Մեր կոնդակով կը հաստատենք Մեր այդ որոշումը եւ կը մաղթենք Ձեր Սրբազնութեան՝ արեւշատ ու խաղաղ աշխատանքի բազում տարիներ, որպէսզի միշտ նոյն նուիրումի ոգիով եւ քաջակորով գործունէութեամբ, չէն ու պայծառ պահպանէք Հայոց Սուրբ Յակոբի պատմական եւ սրբազան Տաճարը, Տաճար սրբութեան, Տաճար լոյսի եւ յոյսի, եւ համբաւեալ սրբատեղ համայն հայ հաւատացեալ ժողովուրդի համար:

Մեր Տիրոջ եւ Փրկչի Իջման Սուրբ Սեղանէն եւ Սուրբ Լուսաւորչի անմար կանթեղէն սիրոյ ողջոյն Ձերդ Սրբազնութեան, իբրեւ զինուորեալ սպասաւոր եւ արթուն լուսարար հայ Երուսաղէմին եւ Սուրբ Յակոբին:

Ողջ լերուք, զօրացեալ Սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ: Ամէն:

Տուա Կոնդակս ի 24-6 յունուարի,

1964 Փրկչական ամի,

եւ ի տուածիս Հայոց Ռեժի,

ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի.

Հմբ. 471



Արամ Դեմիրճեան

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ